ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

«ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ
կայացած 2019թ. դեկտեմբերի 3-ին

Նախագահ՝ Հ. Մաթևոսյան
Քարտուղար՝ Ե. Բաղրամյան

ՕՐԱԿԱՐԳ

1. Ակադեմիայի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացների իրականացման արդյունավետության վերլուծության հաշվետվությունը:

/Զեկ.՝ Հ. Հարությունյան/

2. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար մրցույթի կազմակերպում

/Զեկ.՝ Հ. Ղարիբյան/

3. Որակի ապահովման գործընթացի իրականացման շրջանակներում ներկայացված փաստաթղթերի քննարկում և հաստատում

/Զեկ.՝ Հ. Ղարիբյան/

4. Ընթացիկ հարցեր

Լսեցին՝

Լսեցին՝

1. Որակի ապահովման կենտրոնի պատասխանատու Հ. Հարությունյանին.

Նա ներկայացրեց թե ովքեր են Ակադեմիայի ներքին (ուսանողներ, դասխոսներ և այլն) և արտաքին (շրջանավարտներ, դիմորդներ, գործատուներ և այլն) շահակիցները՝ ինչ միջոցներով են վերհանվում նրանց կարիքները (հարցումներ հարցաթերթիկներ տարբեր կատեգորիաների համար) և դրանց արդյունավետության վերլուծությունը:

Ներկայացրեց SWOT վերլուծություն:

Արտահայտվեցին Հ. Մաթևոսյանը, Ս. Կոխլիկյանը, Վ. Բրուտյանը, Հ. Պետրոսյանը. նշվեց, որ պետք է նշվի արյունավետության գնահատման ցուցիչները:

2. Հ. Ղարիբյանը ներկայացրեց «Ճգնաժամային կառավարում» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթի համար ստացված հայտը: Թափուր տեղի համար հայտ ներկայացրել էր միայն ՃԿՊԱ դոցենտ մանկավարժության դոկտոր Վ. Բրուտյանը:

   Հ. Ղարիբյանը ներկայացրեց նրա կենսագրությունը, աշխատանքային գործունեությունն ու գիտական աշխատանքները:

Արտահայտվեցին՝ Փ/Ծ գեներալ-մայոր Հ. Մաթևոսյանը և Հ. Պետրոսյանը:

   Ելույթ ունեցավ ՃԿՊԱ դոցենտ մանկավարժության դոկտոր Վ. Բրուտյանը: Շնորհակալություն հայտնեց գործընկերներին և նշեց, որ ընտրվելու դեպքում ինքն իր

երկարատև մանկավարժական փորձն ու գիտելիքները կներդնի ամբիոնի բնականոն գործունեության, պրոֆեսորա դասխոսական անձնակազմի գիտական պոտենցիալն օգտագործելու, զարգացնելու և այլ գործընթացում:

Վ. Բրուտյանի ելույթից հետո «Ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ի համաձայն գիտական խորհրդի նախագահն անդամներին ներկայացրեց գաղտնի (փակ) քվեարկության կարգը և գիտական խորհրդի որոշմամբ խորհրդի անդամներից ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով, հետևյալ կազմով՝

նախագահ՝ կենս. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Բագիյան,

անդամներ՝ տնտեսագիտության թեկնածու Յ. Գյուրջյան և պատմ. գիտ. թեկնածու Վ. Կրբեկյան:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 25 անդամից նիստին մասնակցել է 21-ը. կողմ՝ 21, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

Վ. Բրուտյանը վստահության համար շնորհակալություն հայտնեց գործընկերներին:

3. Հ. Ղարիբյանը ներկայացրեց ամբիոններում և ֆակուլտետում քննարկված «Շահակիցների կարիքների գնահատման» կանոնակարգը:

Որոշեցին՝

1. Ակադեմիայի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացների իրականացման արդյունավետության վերլուծության հաշվետվությունն ***ընդունել ի գիտություն***
2. ***Հաստատել*** մանկավարժության դոկտոր Վ. Բրուտյանի թեկնածությունը «Ճգնաժամային կառավարում» ամբիոնի վարիչի հաստիքում՝ Ակադեմիայի գիտական խորհրդի հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված արդյունքների համաձայն:
3. ***Հաստատել*** քննարկման ներկայացված «Շահակիցների կարիքների գնահատման» կանոնակարգը:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ե. ԲԱՂՐԱՄՅԱՆ**